ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2021 թվականի N 33-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի, 33-րդ, 50-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հակոբ Պարույրի Կարապետյանի դիմումը և հողամասերի հաստատված հատակագծերը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքում գտնվող, Հակոբ Պարույրի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող հասցե ունեցող տնամերձ հողամասի բաժանման արդյունքում առաջացած նոր հողամասին՝ 241,0 քառակուսի մետր, տալ Երևանյան խճուղի 1/2 հասցեն: Մնացած 800,0 քառակուսի մետր տնամերձ հողամասի հասցեն թողնել՝ Երևանյան խճուղի 1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար՝ _____ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2021թ. հունիսի 16
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2021 թվականի N 34-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով՝ *որոշում եմ.*

1. Առաջարկություն ներկայացնել համայնքի ավագանուն համայնքային սեփականություն հանդիսացող՝ նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, մակերեսի չափը՝ 0,5129 հեկտար, կադաստրային ծածկագիր՝ 04-009-0158-0001 հողամասն աճուրդային կարգով օտարելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար՝ _____ **ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2021թ. հունիսի 16
գ.Այգեկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՅԳԵԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Այգեկ, (0231)65760, aygek.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2021 թվականի N 35-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի, 34-րդ կետի, 50-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով հողամասի համասեփականատեր Զավեն Լալայանի 2021 թվականի հունիսի 21-ի դիմումը՝ *որոշում եմ.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ համայնքում գտնվող Զավեն Լալայանին համասեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 04-009-0158-0004) տալ 1-ին փողոց 5/3 հասցեն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքներն ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Այգեկ համայնքի ղեկավար՝ _____ ՎԱՐՈՒԺԱՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2021թ. հունիսի 22
գ.Այգեկ